ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 193-Ա «04» 09 2020թ. ք.Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԱՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԻՐԱՎԱԲԱՆԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 22-3-25.4-Մ2-5) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐՔԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 51-րդ և 52-րդ կետերով և հիմք ընդունելով Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) իրավաբանական վարչության հայցապահանջների և իրավական ակտերի բաժնի գլխավոր իրավաբանի (ծածկագիր՝ **22-3-25.4-Մ2-5**) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմում ներկայացրած քաղաքացու փաստաթղթերի ամբողջականության և իրավական ակտերի համապատասխանության մասին Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի կողմից տրված 2020 թվականի օգոստոսի 3-ի եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կոմիտեի իրավաբանական վարչության հայցապահանջների և իրավական ակտերի բաժնի գլխավոր իրավաբանի (ծածկագիր՝ **22-3-25.4-Մ2-5**) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար **2020 թվականի սեպտեմբերի 25-ին ժամը 10:00-ին**, անցկացվող ներքին մրցույթին մասնակցելու թույլտվություն տալ՝

   1) Բելլա Գեղամի Հակոբյանին:

2. Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնին՝ Հրամանի 1-ին կետում նշված քաղաքացուն էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մրցույթի մասնակցության Հրամանի մասին՝ որոշումն ընդունվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ՄԵԼԱՆՅԱ ՂՈՒՇՉՅԱՆ**